ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿԿ-ԳՀԱՇՁԲ-22/07

ք. Երևան 29 օգոստոսի 2022 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սպեգան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Էտիբարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 6-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի միասնական արխիվի շենքի ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 90-րդ օրը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն

կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 20,992,800 (քսան միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որից 3498800 (երեք միլիոն չորս հարյուր իննսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում. հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝

պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և

դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
Հ/Հ 900011030815
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար __________ Ա. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍՊԵԳԱՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ն.Զարյան 73/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570078253810100
ՀՎՀՀ՝ 06963267

տնօրեն-------------------Ն. Էտիբարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

1	Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	Շենքը տեղակայված է Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն N 6 փող. N 2 հասցեում: Շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 4309.5 քմ: Շենքը բաղկացած է 3 հարկից, ունի նաև նկուղային հարկ:
2	Կատարման ենթակա (նախատեսվող) ծառայությունների համառոտ բնութագիրը	Նախատեսվում է՝ -ուսումնասիրել շենքի տարածքը, կատարել համապատասխան չափագրման աշխատանքներ, - սենյակների պատերի ներկի մաքրում, սվաղի քանդում, -պատերի և շեպերի բարելավված երկտակ ներկում ծեփամածիկումով բարձրորակ լատեքսային ներկով, - գոյություն ունեցող պատերի մասնակի բարելավված գաջե շերտի իրականացում, ճաքերի մշակում գիպսոնիտով: -միջնորմների փոփոխություն/ քանդում, -քանդվող պատերի դռների ապամոնտաժում և հանձնում պատվիրատուին, -իրականացված ապամոնտաժված և մոնտաժված մասերի մասնակի նորոգման և հարդարման աշխատանքներ, -իրականացնել ջեռուցման մարտկոցների տեղադրում և միացում շենքում գոյություն ունեցող ջեռուցման խողովակներին, -իրականացնել առաջին հարկի պատուհանների և դռների ուղղանկյուն հատվածքով մետաղական ճաղավանդակների տեղադրում, - շինության տարածքում անհրաժեշտ է իրականացնել արտաքին և ներքին լուսավորության մոնտաժ և առկա լուսավորության փոխարինում նորերով: Նախատեսել պարիսպի, դարպասների արտաքին մասի երկկողմանի լուսավորություն:
3	Նորմատիվային պայմաններ	Ծառայություններն իրականացնել ըստ հանրապետությունում գործող նորմատիվային պահանջների. - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 83-Ն հրաման, -ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» N 1504-Ն որոշում, - ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում», -ՎՍՆ 59-88 «Բնակելի և հասարակական շենքերի էլեկտրասարքավորանք. Նախագծման նորմեր»:
	Կատարման ենթակա աշխատանքներին ներկայացվող պահանջները	Պարտադիր պայմաններ՝ - Ճաղավանդակները պետք է ունենան պատուհանների և դռների պարագծին համապատասխան արտաքին տեսք, -պատուհանների ճաղավանդակները լինեն չբացվող, դռներինը՝ երկկողմանի բացվող, պատրաստված բարձրորակ մետաղական փականով: -ճաղավանդակները ներկված լինեն բարձրորակ յուղաներկով, երկտակ ներկած /գունային երանգը համաձայնացնել պատվիրատուի հետ/, -ճաղավանդակի կարկասի ձողերը պատրաստված լինեն քառակուսի հատվածքի կարծր, չօգտագործված մետաղական սնամեջ պրոֆիլային խողովակներից՝ 30x20x2 մմ հատվածքով, -ամրացումներն իրականացնել համապատասխան չափերի պտուտակային մեխերով, հնարավոր բոլոր կողմերից՝ եռակցմամբ, -պատուհանների և դռան ճաղավանդակները պատվիրելուց առաջ չափերը ճշտել ըստ իրական բացվածքների:

		-Անհրաժեշտ է իրականացնել 1800 Վտ հզորությամբ ջեռուցման մարտկոցների տեղադրում (600մմ, 10սմ լայնություն), ներառյալ կոմպլեկտավորող դետալները և միացում գոյություն ունեցող ջեռուցման պոլիպրոպիլենային խողովակներին, ներառյալ մարտկոցի կարգավորիչ փականների /d 15/, օդահան փականների /d 15/ և դատարկման փականների տեղադրումը /d 15/: -Քանդված միջնորմների հատվածամասերում հատակների վրա նախատեսել ց/ավազի շերտի իրականացում՝ շուրջ 20 քմ, որից հետո սալիկապատել՝ գոյություն ունեցող սալիկներին հնարավորինս համապատասխան /չափեր, գույն/, իսկ առաստաղի հատվածում իրականացնել գաջե քսահարթում շուրջ 20 քմ /ինչը ներառված է «Առաստաղներ» բաժնում/: -Շենքի տարածքում կան լուսային հենասյուներ, որոնց վրա անհրաժեշտ է մոնտաժել արտաքին լուսավորություն՝ ոչ պակաս 100 Վտ հզորության LED տեսակի լուսատուներով, ինչպես նաև 2-րդ հարկի մակարդակի վրա գտնվող լուսավորությունների փոխարինում նորերով: Սնուցման եռաշերտ մեկուսիչով ВВГ-3х4 մմ պղնձե մալուխների անցկացումը անհրաժեշտ է իրականացնել պատի վրայով, օդային եղանակով: Ավտոմատ անջատիչները փոխարինել նորով՝ 5 կՎտ հզորությամբ: Միացման կետերում ապահովել ջրակայունության անվտանգության P5 աստիճանի նորմեր: Աշխատասենյակներում ներքին լուսավորություն ապահովելու համար առկա սնուցման կետից միացնել թվով 4 հատ 40x40 սմ արտաքին տեղադրման LED լուսատուներ՝ առաստաղի վրա համաչափ, սիմետրիկ դասավորվածությամբ, որոնց սնուցող լարերը 2x1,5 մմ առաստաղին անցկացնել 20x20 մմ պլաստմասե սակառներով (короб): Աշխատասենյակներում վարդակների ավելացումը իրականացնել արտաքին մոնտաժման եղանակով՝ պատին, հատակից 45 սմ բարձրության վրա, ամրացնելով 20x40 մմ պլաստմասե սակառներով: Սենյակի ամբողջ պարագծով վարդակների տեղադրում թվով 4 տեղ, յուրաքանչյուրը 3 տեղանոց, 16А հոսանքի ուժի դիմացկունությամբ, որոնք պետք է ունենան հակաջերմային կաղապարներ 90° և հակահրդեհային բաղադրություն՝ 40%-ից ոչ պակաս: Հաղորդիչ հատվածների մակերեսները լինեն պղնձե կամ օլուֆապատ: Սնուցող լարերի միացումները իրականացնել զոդման միջոցով և միացման կետերը մեկուսացնել 1,2 մմ հաստության վակումային մեկուսիչ կեմրիկներով: Վարդակներ սնուցող լարը պետք է լինի ВВГ-3х2.5 մմ /ШВП տեսակի: Վարդակների հաղորդիչ հատվածները ապահովված լինեն լայնանալու հնարավորությունից: Շենքի 3-րդ հարկում անհրաժեշտ է իրականացնել էլ. մոնտաժման աշխատանքներ: Վարդակների և ներքին լուսավորության ավելացում, օդորակիչների համար նախատեսված լարերի անցկացում: Օդորակիչների համար նախատեսված սնուցման լարերը անցկացնել աստիճանավանդակներում առկա ավտոմատ անջատիչների տուփից ուղղահայաց դեպի տանիք 1.5 մ երկարությամբ առաստաղից անցք անելու միջոցով: Տանիքի մեջ անցկացնել հակահրդեհային մեկուսիչ խողովակ ВВГ-3х4 մմ / ШВП տեսակի պղնձե մալուխով, ծակելով շենքի ճակատային հատվածը դուրս գալ աշխատասենյակի համար նախատեսված օդորակիչի դրսում դրվող բլոկի մոտ: Անհրաժեշտ է փոխարինել ավտոմատ անջատիչների տուփերը, ըստ անհրաժեշտության ավելացնել վերջիններիս քանակը, իսկ ծանրաբեռնվածությունը բաշխել համաչափ 3 փազերի միջև: Աշխատանքներն կատարելիս խստորեն պահպանել հակահրդեհային և անվտանգության միջազգային նորմերը: Աշխատանքի կատարման ընթացքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:
4	Այլ պահանջներ	Պարտադիր պայմաններ՝ -բոլոր ապրանքատեսակները լինեն գործարանային արտադրության,

		-գնված ապրանքատեսակները ունենան արտադրման սերտիֆիկատ և արտադրողի կողմից տրամադրված երաշխիքային կտրոն, -ապրանքների տեղափոխումը և տեղադրումը իրականացվի շահած ընկերության կողմից, -ապրանքատեսակների նմուշները, ներառյալ ձևի և գույնի ընտրությունը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏ

Հ.հ.	Աշխատանքի անվանումը	Չ.մ.	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	Պատերի ներկի մաքրում	քմ	920		
2	Պատերի սվաղի քանդում մակերեսի 30%-ի չափով	քմ	276		
3	Առաստաղի քսահարթման մաքրում	քմ	440		
4	Դռների ապամոնտաժում, պահեստավորում և հանձնում պատվիրատուին	քմ	40		
5	Միջնորմների փոփոխություն/ քանդում	քմ	395		
6	Քանդվածի դուրս բերում	տն	65		
7	Շինաղբի բարձում ավտոմեքենաների վրա	տն	65		
8	Շինաղբի տեղափոխում մինչև 13 կմ	տն	65		
	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
	ՆԵՐՔԻՆ ՊԱՏԵՐ				
9	Պատերի, շեպերի բարելավված երկտակ ներկում ծեփամածիկումով բարձրորակ լատեքսային ներկով	քմ	970		
10	Գոյություն ունեցող պատերի և շեպերի մասնակի բարելավված գաջե շերտի իրականացում / գոյություն ունեցող պատերի մակերեսի 30% -ի չափով	քմ	290		
11	Պատերի ճաքերի մշակում գիպսոնիտով / 20% ընդհանուր պատերի մակերեսից/	քմ	195		-
	ԱՌԱՍՏԱՂՆԵՐ				
12	Առաստաղների ծեփամածիկում և բարելավված երկտակ ներկում բարձրորակ լատեքսային ներկով	քմ	450		
13	Առաստաղի գաջե քսահարթում	քմ	470		-
	ՀԱՏԱԿՆԵՐ				
14	Հատակների ց/ավազի շերտի իրականացում	քմ	20		
15	Սալիկների իրականացում	քմ	20		
	ՃԱՂԱՇԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ				
16	Պատուհանների և դռների ճաղավանդակների տեղադրում 30x20x2մմ	քմ	170		
17	Պատուհանների և դռների ճաղավանդակների երկտակ յուղաներկով ներկում	գծմ	1300		
	ՋԵՌՈՒՑՈՒՄ				
18	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում 600 մմ, 10սմ հաստ./լայն., 1800 Վտ, ներառյալ կոմպլեկտավորող դետալները	սեկց/հատ	2350		
19	Խողովակ պոլիպրոպիլենային ներառյալ միացման դետալները/ գոյություն ունեցող խողովակների տրամագծին համապատասխան/	գծմ	360		

20	Մարտկոցի կարգավորիչ փական d 15 ,,Ջակումինի,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	360		
21	Մարտկոցի օդահան փական d 15	հատ	180		
22	Դատարկման փականի տեղադրում d 15	հատ	180		
	ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ				-
23	Եռատեղ վարդակ 16A ,,Տիտան,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	105		
24	Պղնձե բազմամալուխ /Многожильный провод/ ВВГ /ШВП /-3x2.5 մմ□	գծմ	1100		
25	Պղնձե բազմամալուխ /Многожильный провод/ ВВГ /ШВП /-2x1.5 մմ□	գծմ	150		
26	Պղնձե բազմամալուխ /Многожильный провод/ ВВГ /ШВП /-3x4 մմ□	գծմ	1050		
27	Ավտոմատ անջատիչի տուփ ներքին տեղադրման, 20-ից ավել տեղով ,,Տիտան,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	2		
28	Ավտոմատ անջատիչ P1C 25A Նոմինալ 5 կՎտ ապահովող ,,Շնայդեր,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	50		
29	Ավտոմատ անջատիչ P3C 63A Նոմինալ 5 կՎտ ապահովող ,,Շնայդեր,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	2		
30	Հակահրդեհային ծալքավոր խողովակ /гофре/ Ф20 մմ	գծմ	1000		
31	Պլաստմասե սակառ (короб) մալուխի 30x40 մմ	գծմ	1050		
32	Պլաստմասե սակառ (короб) մալուխի 20x20 մմ	գծմ	120		
33	Եռաշերտ մեկուսիչով պղնձե բազմամալուխ /Многожильный провод/ փափուկ կաբել ВВГ /ШВП /-3x4 մմ□	գծմ	500		
34	Ներքին լույսավորության LED լուսատու 40x40 սմ /արտաքին տեղադրման/	հատ	110		
35	Արտաքին լուսավորության LED լուսատուներ 100 Վտ	հատ	100		

* Կապալառուն աշխատանքները կատարում է Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 6-րդ փողոցի թիվ 2 հասցեում:

Հ.հ.	Աշխատանքի անվանումը	Չ.մ.	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	Պատերի ներկի մաքրում	քմ	920	800	736000
2	Պատերի սվաղի քանդում մակերեսի 30%-ի չափով	քմ	276	500	138000
3	Առաստաղի քսահարթման մաքրում	քմ	440	500	220000
4	Դռների ապամոնտաժում, պահեստավորում և հանձնում պատվիրատուին	քմ	40	1000	40000
5	Միջնորմների փոփոխություն/ քանդում	քմ	395	800	316000
6	Քանդվածի դուրս բերում	տն	65	1000	65000
7	Շինաղբի բարձում ավտոմեքենաների վրա	տն	65	1000	65000
8	Շինաղբի տեղափոխում մինչև 13 կմ	տն	65	2000	130000
	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
	ՆԵՐՔԻՆ ՊԱՏԵՐ				
9	Պատերի, շեպերի բարելավված երկտակ ներկում ծեփամածիկումով բարձրորակ լատեքսային ներկով	քմ	970	1500	1455000

10	Գոյություն ունեցող պատերի և շեպերի մասնակի բարելավված գաջե շերտի իրականացում / գոյություն ունեցող պատերի մակերեսի 30% -ի չափով	քմ	290	1990,5	577300
11	Պատերի ճաքերի մշակում գիպսոնիտով / 20% ընդհանուր պատերի մակերեսից/	քմ	195	1500	292500
	ԱՌԱՍՏԱՂՆԵՐ				
12	Առաստաղների ծեփամածիկում և բարելավված երկտակ ներկում բարձրորակ լատեքսային ներկով	քմ	450	2500	1125000
13	Առաստաղի գաջե քսահարթում	քմ	470	2300	1081000
	ՀԱՏԱԿՆԵՐ				
14	Հատակների g/ավազի շերտի իրականացում	քմ	20	2000	40000
15	Սալիկների իրականացում	քմ	20	15000	300000
	ՃԱՂԱՃԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ				
16	Պատուհանների և դռների ճաղավանդակների տեղադրում 30x20x2մմ	քմ	170	7000	1190000
17	Պատուհանների և դռների ճաղավանդակների երկտակ յուղաներկով ներկում	գծմ	1300	1000	1300000
	ՋԵՌՈՒՑՈՒՄ				
18	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում 600 մմ, 10սմ հաստ./լայն.. 1800 Վտ, ներառյալ կոմպլեկտավորող դետալները	սեկց/հատ	2350	3000	7050000
19	Խողովակ պոլիպրոպիլենային ներառյալ միացման դետալները/ գոյություն ունեցող խողովակների տրամագծին համապատասխան/	գծմ	360	2700	972000
20	Մարտկոցի կարգավորիչ փական d 15 ,,Ջակումինի,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	360	1000	360000
21	Մարտկոցի օդահան փական d 15	հատ	180	500	90000
22	Դատարկման փականի տեղադրում d 15	հատ	180	500	90000
	ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ				-
23	Եռատեղ վարդակ 16A ,,Տիտան,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	105	2500	262500
24	Պղնձե բազմամալուխ /Многожильный провод/ ВВГ /ШВП /-3x2.5 մմ²	գծմ	1100	400	440000
25	Պղնձե բազմամալուխ /Многожильный провод/ ВВГ /ШВП /-2x1.5 մմ²	գծմ	150	300	45000
26	Պղնձե բազմամալուխ /Многожильный провод/ ВВГ /ШВП /-3x4 մմ²	գծմ	1050	600	630000
27	Ավտոմատ անջատիչի տուփ ներքին տեղադրման, 20-ից ավել տեղով ,,Տիտան,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	2	20000	40000
28	Ավտոմատ անջատիչ P1C 25A Նոմինալ 5 կՎտ ապահովող ,,Շնայդեր,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	50	1200	60000
29	Ավտոմատ անջատիչ P3C 63A Նոմինալ 5 կՎտ ապահովող ,,Շնայդեր,, ֆիրմայի կամ համարժեք	հատ	2	5000	10000
30	Հակահրդեհային ծալքավոր խողովակ /гофре/ Φ20 մմ	գծմ	1000	500	500000
31	Պլաստմասե սակառ (короб) մալուխի 30x40 մմ	գծմ	1050	350	367500
32	Պլաստմասե սակառ (короб) մալուխի 20x20 մմ	գծմ	120	250	30000
33	Եռաշերտ մեկուսիչով պղնձե բազմամալուխ /Многожильный провод/ փափուկ կաբել ВВГ /ШВП /-3x4 մմ	գծմ	500	800	400000

34	Ներքին լույավորության LED լուսատու 40x40 սմ /արտաքին տեղադրման/	հատ	110	2500	275000
35	Արտաքին լուսավորության LED լուսատուներ 100 Վտ	հատ	100	3000	300000
	ԸՆԴԱՄԵՆԸ-(ներառյալ ԱԱՀ)				20992800

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
Հ/Հ 900011030815
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար__________Մ. Ղուկասյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍՊԵԳԱՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ն.Զարյան 73/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570078253810100
ՀՎՀՀ՝ 06963267

տնօրեն------------------Ն.Հակոբյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2
ԿԿ-ԳՀԱՇՁԲ-22/07 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ N 6 ՓՈՂ. N 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն N6 փող. N2 հասցեում գտնվող ՀՀ կադաստրի կոմիտեի միասնական արխիվի շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	ոչ ուշ քան 90-րդ օրացուցային օրը

*Օրացուցային գրաֆիկից շեղումները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ: Ժամկետների խախտման մասին Պատվիրատուն երկու անգամ Կատարողին գրավոր տեղեկացնելուց հետո Պայմանագիրը կարող է միակողմանի լուծել:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
Հ/Հ 900011030815
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

/Գլխավոր
քարտուղար
Ա.Ղազարյան
ստորագրություն
L.S

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍՊԵԳԱՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ն.Զարյան 73/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570078253810100
ՀՎՀՀ՝ 06963267

տնօրեն----------Ե.Էտիբարյան
ստորագրություն
L.S

Հավելված թիվ 3
ԿԿ-ԳՀԱՇՁԲ-22/07 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
ԿԿ-ԳՀԱՇՁԲ-22/07 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

29.08.2022 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-22/07 Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 6-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի միասնական արխիվի շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 04 հոկտեմբերի 2022 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սպեգան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Էտիբարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2022 թվականի օգոստոսի 29-ին կնքված Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 6-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի միասնական արխիվի շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման թիվ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-22/07 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 8.5 և 8.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 6-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի միասնական արխիվի շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Աշխատանքի դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կադաստրի կոմիտե	«ՍՊԵԳԱՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ՀՀ, ք. Երևան, Ն.Զարյան 73/1
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011030815	Հ/Հ 1570078253810100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ՝ 06963267
Գլխավոր	
քարտուղար----------Մ. Խաչատրյան	տնօրեն----------Ն. Էտիբարյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

ԿԿ-ԳՀԱՇՁԲ-22/07 ծածկագրով պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 6-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի միասնական արխիվի շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ)

ՀՀ դրամ

Աշխատանքի						
դրավերով նախատես. /բ համարը	գնումների պլանով նախատես.միջանցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/501	Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 6-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի միասնական արխիվի շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ	10496400	20992800	20992800	20992800

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար---------- Մ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍՊԵԳԱՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ն.Զարյան 73/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570078253810100
ՀՎՀՀ՝ 06963267

Տնօրեն ----------Ն. Էտիբարյան
/ստորագրություն/
Կ.Տ